ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/86

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Մասնակից՝ «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3» ծածկագրով գնանշման հարցում, տնտեսական ապրանքների և շինանյութերի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4399-2020 գրությամբ «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.03.2020թ.-ի թիվ 20/223 գրության հիման վրա, 20.03.2020թ.-ին «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 20.03.2020թ.-ին:

23.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/86 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

27.03.2020թ.-ին, 14.04.2020թ.-ին և 20.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 14.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.04.2020թ.-ին:

2. <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 18.03.2020թ.-ի թիվ 20/223 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները՝ կից ներկայացվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 23.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4399-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տնտեսական ապրանքների և շինանյութերի ձեռքբերման նպատակով 02.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.12.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ն գնման ընթացակարգի 4-րդ և 29-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.01.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը, որոշել է տնտեսական ապրանքների և շինանյութերի ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ին:

13.01.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 5 օրացուցային օր՝ 14.01.2020թ.-18.01.2020թ. ներառյալ:

Պատվիրատուն 12.03.2020թ.-ին Մասնակցին ներկայացրել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3» ծածկագրով պայմանագրի նախագիծը և խնդրել, որ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուին ուղղված գրությամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ներկայացնել «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ի կողմից կնքված պայմանագրը:

«Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ի կողմից 13.03.2020թ.-ին ներկայացված գրությամբ վերջինս հայտնել է, որ հրաժարվում է ստորագրել պետության կարիքների համար ապրանքների մատակարարման «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3/2» (11/73-2020) պայմանագրին կից համաձայնագիր 1-ը և խնդրել է միակողմանի լուծել վերոնշյալ պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4399-2020 գրությամբ «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 15 աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից տնտեսական ապրանքների և շինանյութերի ձեռքբերման նպատակով 02.12.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ն Հանձնաժողովի 19.12.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն գնման ընթացակարգի 4-րդ և 29-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է տնտեսական ապրանքների և շինանյութերի ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ին:

Պատվիրատուն 12.03.2020թ.-ին Մասնակցին ներկայացրել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3» ծածկագրով պայմանագրի նախագիծը և խնդրել, որ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ուղղված գրությամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ներկայացնել «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ի կողմից կնքված պայմանագրը:

«Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ի կողմից 13.03.2020թ.-ին ներկայացված գրությամբ վերջինս հայտնել է, որ հրաժարվում է ստորագրել պետության կարիքների համար ապրանքների մատակարարման «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3/2» (11/73-2020)

պայմանագրին կից համաձայնագիր 1-ը և խնդրել է միակողմանի լուծել վերոնշյալ պայմանագիրը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4399-2020 գրությամբ «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/86 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արտավազդ Պողոսյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ